

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

25.11.2025թ.

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

- Լ. Քոչարյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (նիստը վարող)
- Ժ. Խառատյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
- Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Օ. Աբրահամյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Վ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
- Հ. Լիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող
- Ս. Սարգսյան - ԱԱՏՄ ղեկավար
- Գ. Հովհաննիսյան - ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
- Ա. Դավթյան - ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Չեն մասնակցել՝

- Ա. Ավանեսյան - ՀՀ առողջապահության նախարար
- Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
- Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Օրակարգի հարցեր

1. Տեսչական մարմնի 2026 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:
2. Տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

3. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվության քննարկում,

4. Տեսչական մարմնի 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման հաստատում:

5. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

6. Տեսչական մարմնի 2026 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին հավանություն տալը:

7. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի քննարկում և հաստատում:

8. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի մայիսի 18-ի N 6-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույց»-ում փոփոխությունների քննարկում և հաստատում:

9. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Ժենյա Մայիլյանի անդամությունը դադարեցնելու և նոր անդամ ընտրելու հարցի քննարկում:

10. Այլ հարցերի քննարկում:

Լ. Քոչարյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Խորհրդի անդամների միաձայն քվեարկությամբ (7 կողմ) օրակարգը հաստատվեց:

1. Քննարկվեցին օրակարգի 1-2-րդ, 6-9-րդ հարցերը

Ա. Սարգսյանը ներկայացրեց նախատեսվող ԱԱՏՄ 2026 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը, նշեց, որ նախատեսվում է ընդհանուր 817 ստուգում 790 տնտեսավարող սուբյեկտի մոտ: Այսինքն 27 ստուգում համատեղ է լինելու: 743 ստուգումը բարձր, 36-ը միջին իսկ մնացածը ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ է լինելու: Նշեց տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության խմբում ներառելու հիմքերը, հաշվարկը և վերահկողության ոլորտներում նախատեսվող ստուգումների քանակը: Այն տնտեսավարող սուբյեկտները որոնց ստուգումները 2025 թվականին չեն ավարտվել չեն ընդգրկված հաջորդ տարվա ստուգումների ծրագրում:

ԱԱՏՄ 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրով հիմնական շեշտը դրված է իրազեկման աշխատանքների ապահովման վրա, այդ թվում դեղատոմսային դեղերի բացթողնման խնդիրների կարգավորմանը:

ԱԱՏՄ 2026 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվի վերաբերյալ նշեց, որ նախագիծը ներկայացվել է ՀՀ Ֆինանսների նախարարություն, ինչի վերաբերյալ առարկություններ չեն եղել: Հիմնական ծախսերը ուղղվում են ԱԱՏՄ ծառայողների աշխատավարձերի, ծառայողական ավտոմեքենաների սպասարկման և լաբորատոր ծառայությունների, հսկիչ գնումների, գործիքային չափումների ծախսերի ապահովմանը:

Խորհրդի «ՀՀ առողջապահական և աշխատանքախոսական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ նշեց, որ մինչ այժմ ԱԱՏՄ-ի կողմից դիմում ստանալու դեպքում իրականացվում է վարչական վարույթ, որը նախատեսվում է իրականացնել այլևս ստուգումների միջոցով հետագայում որոշ խնդիրներից և բարդություններից խուսափելու նպատակով: Դիմումի հիման վրա ստուգվելու է բացառապես ներկայացված դիմումով բարձրացված հարցը, իսկ միևնույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ մի քանի դիմումների դեպքում կարող է իրականացվել ամբողջական ստուգում:

Խորհրդի 2020 թվականի մայիսի 18-ի N 6-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույց»-ում փոփոխությունների վերաբերյալ նշեց, որ լրացվում է նաև ստացված դիմումների և այլ մարմիններից տեղեկությունների հիման վրա ստուգումների իրականացման դեպքերը և առանձնահատկությունները: Միաժամանակ առաջարկեց ծրագրային ստուգումների դեպքում կրճատել ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝ սահմանելով պարզման ենթակա հանգամանքները վերջին 3 տարվա կտրվածքով, հաշվի առնելով ԱԱՏՄ ռեսուրսների արդյունավետ ծախսերը և ԱԱՏՄ-ին օրենքով վերապահված վերահսկողության ոլորտներում հիմնական նպատակներին հասնելու արդյունավետությունը ինչպես նաև այդ դրույթը լրացնել ստուգումների ուղեցույցում, որի մասով մանրամասն քննարկում ծավալվեց:

Այդ հարցի շուրջ Խորհուրդը չառարկեց:

Խորհրդի անդամ՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Ժենյա Մայիլյանի անդամությունը դադարեցնելու հարցի հետ կապված նշվեց, որ վերջինս դիմում է ներկայացրել անդամությունը դադարեցնելու վերաբերյալ:

Քննարկվեց նաև ԱԱՏՄ կադրային հագեցվածության, աշխատողների վարձատրության հարցերը: Ս. Սարգսյանի կողմից նշվեց, որ այժմ ԱԱՏՄ-ի համալրվածությունը մոտ 220 հոգի է և կատարվում են նշանակումներ, սակայն առկա են նաև ազատումներ:

Լ. Քոչարյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի 1-2-րդ, 6-9-րդ հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

2. Քննարկվեց օրակարգի 3-5-րդ հարցերը

Ա. Դավթյանը ներկայացրեց ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը, 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը և կատարողականի գնահատումը՝ շեշտադրելով որակի վերահսկողության վարչության կողմից առանձնացված հիմնական խնդիրները: Անդրադարձավ ԱԱՏՄ-ում տեղի ունեցած ներքին կարգապահական խախտումներին, իրականացված ծառայողական քննություններին, ԱԱՏՄ կայացած վարչական ակտերի դեմ բերված բողոքներին և դրանց քննության արդյունքների և արձանագրված թերությունների մասին:

Քննարկվեց վարչարարության ընթացքում իրականացվող ծանուցումների իրավակարգավորումների, դրանց գործնական խնդիրների և նախատեսվող օրենսդրական կարգավորումների մասին:

Լ. Քոչարյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի 3-5-րդ հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

Որոշվեց.

1. Հաստատել ԱԱՏՄ 2026 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:
2. Հաստատել ԱԱՏՄ 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:
3. Ընդունել ի գիտություն ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը:
4. Հաստատել ԱԱՏՄ 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
5. Հաստատել ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:
6. Հավանություն տալ ԱԱՏՄ 2026 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին:
7. Հաստատել Խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելուն:
8. Հաստատել Խորհրդի 2020 թվականի մայիսի 18-ի N 6-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելուն:
9. Առաջարկել դադարեցնել «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Ժենյա Մայիլյանի Խորհրդում անդամությունը և ընտրել Խորհրդի նոր անդամ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝



Լ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ